ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» հունիսի 2014թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 22-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և 68-րդ հոդվածի 2-րդ մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Դավիթ Անհաղթ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել առանձնացման ձևով՝ ստեղծելով «Քանաքեռ Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունը։

2. Անվանափոխել «Դավիթ Անհաղթ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ «Դավիթ Անհաղթ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության։

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Դավիթ Անհաղթ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման և անվանափոխման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դավիթ Անհաղթ» ԲԿ» ՓԲԸ-ն հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող բուժհաստատություն է, որը ձևավորվել է համաձայն Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի վերակազմակերպման մասին» թիվ 260-Ա որոշմամբ՝ առանձնանալով «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ից և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան: Չնայած բժշկական կենտրոն լինելու հանգամանքին՝ բուժհաստատությունում մատուցվող հիվանդանոցային ծառայությունները սահմանափակվում են միայն մանկաբարձական և ոչ բարդ գինեկոլոգիական տեսակներով, չեն մատուցվում վերակենդանացման ծառայություններ:

Պայմանավորված առկա շենքային պայմաններով (վերջին վերանորոգումն իրականացվել է 1980-ական թվականներին), ժամանակակից սարքավորումների բացակայությամբ՝ բուժհաստատությունում վերջին տարիներին անընդհատ արձանագրվում է ծնունդների թվաքանակի անկում: Այսպես՝ 2010թ արձանագրված 754 ծնունդի դիմաց, 2013թ ծնունդների թվաքանակը կազմել է 454, կամ նվազել է շուրջ 40%-ով: Ծնունդների նման թվաքանակի պայմաններում հնարավոր չի եղել ապահովել ծառայության ինքնածախսածածկումը: Այսպես՝ 2013թ արդյունքներով ծննդօգնության ծառայությունների մատուցման մասով վնասի չափը կազմել է ավելի քան 42.6 մլն դրամ, ինչի արդյունքում աճել են բուժհաստատության կրեդիտորական պարտքերը՝ այսպես, եթե 01.01.2013թ դրությամբ բուժհաստատության կրեդիտորական պարտքերը կազմել են 39.7 մլն դրամ, ապա 01.01.2014թ դրությամբ՝ 54.8 մլն դրամ, կամ 2013թ ընթացքում կուտակվել է շուրջ 15.1 մլն դրամի կրեդիտորական պարտք: 01.03.2014թ դրությամբ

բուժհաստատության կրեդիտորական պարտքը կազմել է 62.1 մլն դրամ: Բուժհաստատության կրեդիտորական պարտքերի կուտակման հիմնական պատճառ է հանդիսանում մանկաբարձական ծառայության մատուցումը: «Դավիթ Անհաղթ ԲԿ» ՓԲԸ-ն հանրապետության միակ բժշկական կենտրոնն է, որտեղ նույն բուժհաստատության կողմից մատուցվում են միայն պոլիկլինիկական և մանկաբարձագինեկոլոգիական ծառայություններ, որոնց համատեղելիությունն առանց հիվանդանոցային ծառայությունների այլ տեսակների մատուցման արդյունավետ չէ: Դրա արդյունքում խզվում է բժշկական միջամտությունների իրականացման հաջորդականությունը: Նշված խզումը շատ ավելի ակնառու է դառնում գինեկոլոգիական ծառայության՝ «Քանաքեռ Զեյթուն ԲԿ» ՓԲԸ-ի տարածքում գտնվելու հանգամանքով (ծննդատան մասնաշենքում տեղակայման անհնարինության պատճառով):

Հաշվի առնելով, որ վերակազմակերպման արդյունքում «Դավիթ Անհաղթ» ԲԿ» ՓԲԸ-ում մատուցվելու են միայն արտահիվանդանոցային ծառայություններ, ուստի անհրաժեշտ է բուժհաստատության անվանումը համապատասխանեցնել մատուցվող ծառայությունների բնույթին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դավիթ Անհաղթ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման և կանոնադրության փոփոխության մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դավիթ Անհաղթ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման և կանոնադրության փոփոխության մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ